

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԳՆԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

7 սեպտեմբերի 2012թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայաստանի Նանրապետության Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գ. Մելքոնյանի,

համաձայն Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի մարտի 28-ին ստորագրված՝ Ապրանքային նշանների իրավունքի վերաբերյալ Սինգապուրի պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Նանրապետության Նախագահի՝ 27.07.2012թ. ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետա-

գորելով քննության առարկա պայմանագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայաստրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Պայմանագիրն ստորագրվել է 2006 թվականի մարտի 28-ին Սինգապուրում՝ ապրանքային նշանների գրանցման վարչական գործընթացները ներդաշնակեցնելու, ինչպես նաեւ ժամանակակից եւ ճկուն միջազգային համակարգ ստեղծելու նպատակով:

2. Պայմանագրի անբաժանելի մաս են կազմում կանոնակարգերը:

3. Պայմանագրով Նայաստրանի Նանրապետությունն սրանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- կիրառել պայմանագիրն այնպիսի նիշերից բաղկացած նշանների նկատմամբ, որոնք, ՆՏ օրենսդրությանը համապատասխան, կարող են գրանցվել որպես ապրանքային նշաններ,

- պայմանագիրը չկիրառել կոլեկտիվ, հավաստագրային եւ երաշխիքային նշանների նկատմամբ,

- չպահանջել հաղորդակցման ցանկացած թարգմանության հավաստագրում, նոտարական վավերացում, նույնականացում, օրինականացում կամ այլ հաստատում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով,

- հաղորդման վրա ստորագրության անպայման առկայության պահանջի պարագայում ընդունել կանոնակարգերով նախատեսված պահանջներին համապատասխանող ցանկացած ստորագրություն,

- ընդունել ներկայացված հաղորդումը, որի բովանդակությունը համապատասխանում է կանոնակարգերով նախատեսված՝ նմանարիպ Միջազգային փիլային ձեւաթղթին, եթե այդպիսին առկա է,

- միմյանց նման չհամարել ապրանքները կամ ծառայություններն այն հիմքով, որ իրավասու մարմնի իրականացրած ցանկացած գրանցման կամ հրապարակման մեջ դրանք հայտնվում են Նիցցայի դասակարգման նույն դասերում, ինչպես նաեւ դրանք չհամարել իրար ոչ նման, եթե հայտնվում են Նիցցայի դասակարգման փարբեր դասերում,

- կատարել նշաններին վերաբերող Փարիզյան կոնվենցիայի դրույթները, ինչպես նաեւ գրանցել սպասարկման նշաններն ու կիրառել այդպիսի նշանների նկատմամբ Փարիզյան կոնվենցիայի՝ նշանների վերաբերյալ համապատասխան դրույթները:

4. Պայմանագիրը սահմանում է նաև հայրերի ընդունման եւ քննարկման կարգը, իրավաբիրոջ փոփոխության դեպքում գրանցման իրականացման կարգը, ապրանքների եւ ծառայությունների դասակարգման կարգը, ինչպես նաև գրանցման գործողության ժամկետի եւ դրա երկարաձգման ընթացակարգերը, լիցենզիան գրանցելու, գրանցումը փոփոխելու կամ գործողությունը դադարեցնելու կարգը, լիցենզիան չգրանցելու հետեւանքները:

5. Պայմանագրով սահմանված են նաև պայմանագրի կողմ դառնալու, դրանում վերանայումներ եւ փոփոխություններ կատարելու, ինչպես նաև դրա ուժի մեջ մտնելու եւ չեղյալ հայտարարելու կարգն ու պայմանները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2006 թվականի մարտի 28-ին ստորագրված՝ Ապրանքային նշանների իրավունքի վերաբերյալ Սինգապուրի պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

7 սեպտեմբերի 2012 թվականի
ՄՂՈ-1039